

# Ազգայնական թիւն

Կ Ի Ս Ա Մ Ս Ե Ա Յ

Ա Ղ Գ Ա Յ Ի Ն Ե Ի Ք Ա Ղ Ա Ք Ա Կ Ա Ն

Circulation larger than any other Armen. paper in the U. S.

Ա.ՉԱՏՈՒԹԻՒՆԸ չափու համար չէ որ կը հրատարակուի:

Ա.ՉԱՏՈՒԹԻՒՆԸ տունէ տուն ու քաղաքէ քաղաք շրջելով գրամ կամ բաժանորդ չի մուրար:

ՀԱՅ Ժողովրդի յառաջդիմութիւնը մեր շահն է, իսկ Հայոց ազատութիւնը Ա.ՉԱՏՈՒԹԻՒՆԻ նպատակն է...

7. ՏԱՐԻ ԹԻՒ 55

ՆԻՒ ԵՈՐԲ, 1892, ՄԱՅԻՍ 30

ԳԻՆ ՀԻՆԳ ՍԷՆԹ



## ԽՐԻՄԵԱՆ ՀԱՅՐԻԿ

### ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Էջմիածինէն «Արմենիա»ի քաղաք մի մասնաւոր հեռագրէ կիմանալով թէ, միաձայնութեամբ Ա. ընտրելի ընտրուած է՝ ԱՄԵՆ. Տ. ՄԿՐՏԻՉ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԽՐԻՄԵԱՆ ՀԱՅՐԻԿ. 72 քուէով. Բ. ընտրելի ԳԵՐ. ՄԱՏԹԵՆՍ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԻՉՄԻՐԼԵԱՆ 50

ՆԱՄԱԿ ԹԷՆՆԱՆԷ  
Թէհրան, Ապրիլ 27

... Խմբագիր,  
Քաղաքի մէջ Տ. Մարաֆեանցի դէմ յարուցուած արգելքներն շատ եղան թուրք կառավարութեան կողմից, բայց ի դուրս լորովին Պիտի զարմանք իմանալ թէ ձեր Պատուիրակ հաս հասնելէ մի քանի օր վերջ թուրքից զեւսական Մէյիս համը Ռէսիմ պէյ իր ծառաների միջոցաւ Տ. Մարաֆեանցը հրաւիրեց զեւսականատուն, բայց ձեր Պատուիրակն չընդունեց այս հրաւերին սա պատճառաւ որ զեւսական ծառայի մը միջոցաւ կը հրաւիրէր զազգայնականութեան պատգամաւորն:

որ մեծ յարգանքով հիւրասիրեց զՏ. Մարաֆեանց, զարմանք յայտնած է այս մասին:  
Չարմանում ենք մենք տեսնելով որ Մէյիս Ռէսիմ որ իր շարս անականներին հետ բաւական խելքի կարծութիւն ունի, ոչ միայն ջանաց զՏ. Մարաֆեանցն թրքազգաւոր ընել այլ նոյն ջանքերն ըրաւ նաեւ Ասորպատականի քաջ հովուին Ստեփաննոս Եպիսկո՛Սի թարեանի համար. այս մասին սա երեք անգամ եղաւ որ կը զրէ Ռուսաց Գերանմեծար Պ. Պետրովին, բայց այս վերջինն այսպիսի անտեղի հարցի համար չուզեց պատասխանել ընտան:  
Հոս չի մոռնում յիշել մի ուրիշ բան թէ՛ Տաճկաց Սուլթանի տարեգրածի օրը հրաւեր եղաւ ձեր յարգելի Պատուիրակին Տաճկաց զեւսականատուն երթալ և հոն բարեմարտութիւններ անել Սուլթանի կենաց համար յօգուտ Ամերիկայում ապրող Հայ գաղթականութիւններէ և ընդհանուր Հայ ազգի շահուց, բայց Պ. Մարաֆեանց մերժեց ասելով թէ ինքն այդպիսի մի հրահանգ չունէր Ամերիկայի Հայերից, և թէ այդ ընելով զժգոհութիւն կրնար պատճառել Նոր Աշխարհի Հայութեան: Այս մերժումը բաւական

չէրաւ. նորէն լուր դրուեցաւ յարգող Մարաֆեանցի թէ «մենք կը վստահանանք քեզ որ գաղթականութիւնն ուրախ պիտի լինի այդ մասին եւն. եւն.», բայց Պ. Մարաֆեանց կրկին անգամ մերժեց և ի հարկէ մեծ բարիութիւն պատճառեց թիւրք զեւսականատուն: Մենք հաստատ աղբիւրներէ տեղեկացեր ենք թէ զեւսականատուն զեռ ջանքեր կրնէ Տ. Մարաֆեանցն իրենց իշխանութեան տակ առնելու համար, և այժմ խօսք կը պատի հոս թէ Դավրիճում պիտի փորձէ զեւսականատուն ձեռք բերել ձեր Պատուիրակն ու Պօլիս դրկել նրան իր խաւարար թրքազգաւորակ Հայ, առանց զիտնալու թէ այդ անկարելի է այս երկրում:

Հարկ է յայտնել թէ Պ. Մարաֆեանց երկու շարաթէ աւելի է որ մեկնել է Դավրիճ:  
Ձեր քաղաքում, Պ. Խմբագիր, հրատարակող «Հայք» լրագրից մի օրինակ կատանայ հոս մեր բարեկամներից մէկն. սա թերթի վերջի կէտում, որ հիմայ ստացանք, մի նամակ կայ հրատարակուած, որ կան ի մէջ այլոց թէ Պ. Մարաֆեանցը հոս հակառակ բաներ է խօսում «Արմենի» լրագրին դէմ: Սա բողոքովին խարհութիւն է, զի Պ. Մարաֆեանցը ոչինչ զէջ խօսած ունի այդ թերթի դէմ, այլ միշտ գովում է աղէկ էր խօսում այդ օգտակար հրատարակութիւնի վրայ: Մ.

Դավրիճ, 28 Ապրիլ

Երկու շարաթէ աւելի է որ Ամերիկայում գտնուող մեր Հայ գաղթականների յարգելի Պատուիրակն Պ. Յովսէփ Մարաֆեանց որ է այս քաղաքում մեր Արքայան առաջնորդի մօտ: Նա միշտ յարգանք է վայելում տեղոյս երիտասարդութիւնից և ընդհանուր ժողովրդից: Անցեալ գիշեր տեղիս Հայ երիտասարդութիւնն մի փառաւոր հացկերոյթ տուեց Պ. Մարաֆեանցին: Այդ հացկերոյթին ներկայ էին բազմաթիւ նշանաւոր անձինքներ, որք շատ ուրախացրին ձեր Պատուիրակին իրեն եռանդուն խօսակցութիւններուն: Երէկ երեկոյ էլ տեղի հարուստներն ու մեծերն յայտնեցին զՏ. Մարաֆեանց մի փառաւոր խննդըով. սրուն ներկայ էին քաղաքիս բոլոր Հայ երեւելիներն ու Սրբազան Առաջնորդն մեր:

Լուր է պատում հոս թէ թուրք զեւսական աշխատում է զՏ. Մարաֆեանցն բանի զօրութիւններով Պոլիս դրկել. բայց Պ. Մարաֆեանցի դեռ ոչ ոք է կարողացրել մօտենալ այդպիսի փորձ մի փորձելու համար: Եւ արդէն միջազգային օրէնքներին բարձրովին հակառակ է այդպիսի բան մ'անել ձեր գաղթականութեան ծառային որ ապրում է այժմ որ ոչ միայն Միացեալ Նահանգներ այլ և Առիւծի և Արեգակի հովանին ու պաշտպանութիւնն է վայելում:  
Մենք այժմ լու ենք հասկցել թէ մեր քաղաքներն ինչքն են քաղում թուրք կառավարութեան ձեռքից, երբ սա փորձում է այս երկրում անգամ, ուր շնորհիւ մեր

Վեհ. Նարազդին Շահին կատարեալ բարօրութիւն վայելում են ամէն Հայեր, թիւրքն փորձում է ծծել իւր հպատակ Հայերի արիւնն ու դրամը:  
Սա օրից քիչ ատեն առաջ, թրքերի հիւպատոսն հետեւեալ գրութիւնն հրատարակ էր հանել Հայերին ստորագրել տալու համար որ կատարեալ մի անիրաւութիւն է քաղաքակիրթ մարդկանց աչքին: Սա գրութիւնն գրուել էր Հայերէն, թրքերէն և Ֆրանսերէն լեզուներով:

Որք են  
1. Համաձայն Ռամանեան օրինաց ինչպէս ամէն երկրի մէջ, ամէն անհատ պարտի առնուլ մի պաշտօնական գրաւ սր վիպոյթիւն ի հաստատութիւն իւր հպատակութեան, ուստի Օսմ. կայսրու, թեան հպատակ ամէն անձերը, այդ թէ կին որոց անուանը մինչ ցարդ արձանագրուած չեն ի տոմարի, պարտին արձանագրել այն անձինք իւրեանց անուանը և առնուլ հպատակութեան մի վկայագիր:  
2. Չափահաս կանայք և աղջկուք կը դատուին Օսմ. կայսրութեան իշխանութեան արգի կանոնաց համաձայն (1):

3. Անչափահաս մանուկները առանց սեռի բացառութեան պիտի առնուն նոյնպէս սոյն վկայագիրն, սակայն իւրաքանչիւր տարի վերանորոգել զեքը կը մնան մինչ ցնոր տնօրինութիւն Օսմ. իշխանութեան:  
4. Ամէն Դավրիճ-ժարընակ Տաճկահպատակ «առանց բացառութեան» պարտի կրել ազգ. գլխարկ (Ֆէս) և զայն հայթայթելու համար մինչ պայրամի Գ. րդ օրը, առաջիկայ 1 Մայիս ժամանակամիջոց շնորհուի: Այն անձինք որք չհամաձայնին սոյն կայսերական իշխանութեան որոշմանց կը զառուին իւր «ապստամբ» իշխանութեանէն արուած կանոնաց:  
5. Ու եւ պատճառաւ և ոչ ոք իրաւունք պիտի ունենայ բողոքել ընդհանուր հիւպատոսարանի ձեռնարկած կարեւոր տնօրինութեանց դէմ, որ որոշած է զայն խստութեամբ (2) և ազդու եղանակաւ զարմաղրելու:  
19 Ապրիլ 1892

Անուշտ սա գիրն յաջողութիւն չի կարեց գտնել տեղիս Հայերին մէջ: Ուստի բանն անուշ տեղին կապելու համար հիմայ առաջարկուել է թրքահպատակ Հայերին մի խնդրագիր տալ զեւսականատուն և երկու ամիս ժամանակ ուղեւ Ֆէս կրելու համար: Առում են թէ այս բաներին հակառակ գտնուող թրքահպատակ Հայերից մի քանիներն զիտաւորութիւն կայ կապել Պոլիս դրկել: Քանիքն թէհրան հեռագրերին այս օրեր, խնդրելով թրքահպատակութիւնից դուրս գալ բողոքովին: Արժանահաւատ աղբիւրներից լսում ենք թէ թիւրք զեւսական հեռագիր է դրկել Տաճկաց կառավարութեան և խնդրել է որ զօրք դրկեն սահմանազուլը, ծանուցանելով թէ Հայ յեղափոխականներն մօտ ատեններում սահմանազուլը անցնելու են:  
(1) Գովը տանելով բանտարկել:  
(2) Խստութիւնն է կապել և դրկել Պօլիս:

## ՀԵՌԱԳՐԱԼՈՒՐԻՔ

(Ա.ՉԱՏՈՒԹԻՒՆԻ յատուկ գծով)

Լոնտոն, Մայիս 15. — Բիւթգէրի գործակալութեան, Մայիս 14 թուով Տէյլի նիւզի քաղաք հեռագիր մը կը ծանուցանէ թէ նիւ Եորքի Հայկական Միութեան թղթատարական վարչութիւնն գրուեց Ա.ՉԱՏՈՒԹԻՒՆԻ այն թիւերն որք նոյն Միութեան տարեգրածի հանդիսին վրայ նպատաւոր տեղեկութիւններ չէին հրատարակած: Հեռագիրը կը յաւելու նաեւ թէ նոյն լրագրի մուտքն արդիւրած է Հայկական Միութեան ազատ երկիրներու մէջ:

Լոնտոն, Մայիս 18. — Այս օրուան թայմի մէջ հրատարակուած հեռագիր մը կը ծանուցանէ թէ մի երիտասարդ Հայկական Միութեան կառավարութեան հպատակելու փափաք յայտնելով ներկայացած է Գործ. ժողովոյ քննութիւն անցնելու մտօք: Ոստիկանապետը, որ զայն կապակած էր կապակած խուզարկելու, որք բարեբաղդաբար ոչ մի վնասակար բան գտնուած է անոր գրութեանց մէջ: Երեկի նախարարական ժողովոյն մէջ երբ հարցուուեցաւ թէ ի՞նչ կը փնտռէր Պ. ոստիկանապետն — Ա.ՉԱՏՈՒԹԻՒՆԻ լրագրին, կը պատասխանէ զայրացմամբ: Թայմը կը կարծէ թէ այս երիտասարդի ընդունելութիւնն կատկածելի կը թուի քաղաքական բարձր ակմբոց մէջ:

Վենետիկ, Մայիս 20. — Մեր այն թագաւորներն ու զօրավարներն որոց պատկերներն Սիսուանէն ու Այրարատէն արտատպուած էին նիւ Եորքի «Հայք»ին մէջ, մի հաւաքական բողոքագիր մատուցին Հայր Ալիշանի խնդրելով որ արգիլէ այդ արտատպումն: Բողոքագիրն կրէ ի մէջ այլոց թէ, «նկատելով որ այդ թերթի մէջ մեր երեւելի անպատուութիւն է մեր անուան, և նկատելով որ այդ թերթին մեր հօգուոյն հակառակ ընթացքի մէջ է միշտ, կը բողոքեմք այս մասին և ձեր Գերապատուութեան կը խնդրեմք մի անմիջական տնօրինութիւն»: Միութեան Միարանութեան Արքային խօսքին նայելով Հայր Ալիշան անմիջական դարման մը պիտի տանի այս մասին:

Փարիզ, Մայիս 22. — Ռուս ճուգէն կը հեռագրեն թէ Պուլիար կառավարութիւնն մասնից թիւթիւններէ թիւթիւններն քննելով ու անոնց մէջ նիւ Եորքի «Հայք» լրագրոյ խմբագրին բոլոր նամակներն զբաւած ու քննութեան ենթարկած է զանոնք: Ուրիշ հեռագիր մը նոյն լուրը հաղորդելէ վերջ կը յաւելու թէ «Գանուի»ի ու «Հայք»ի սերտ յարաբերութիւնն ու բարեկամական կապն մեծ երկուք յառաջ բերած է «Հայք»ի սակաւաթիւ համակիրներու մէջ: Նիւ Եորքէ կը տեղեկագրեն թէ «Հայք» սուգի մէջ մտած է «Գանուի»ի գաղաքամբ համար, զի անոր պըտուած ջրերուն մէջ ճուգ կը յուսար որաւ իւր «Տիւրքական յանձնարարի» ուղկանով:



Դեռ մի ամիս չէ անցել ինչ մեր երգիչ Ն. Շահնամանը վերջին հրաժեշտ տալով իտալիային, ուրնա երգեցողութիւն սովորելու և իր ձայնը կատարելագործելու համար երեք տարի անցրեց, ուղղորդուեց զէպի իր ապագայ գործունէութեան տեղը Պետերբուրգ, որպէս զի այնտեղ քննութիւն տալով Ռուսաց կայսերական օպերայի յանձնաժողովի առաջ՝ արժանանար իր համար նախատեսուած նոյն օպերայի առաջին և պլանային դերեր կատարող տեւոր երգչի խիստ պատուաբեր աստիճանին: Հասնել այդ նպատակին, ընդունել Պետերբուրգի աշխարհահռչակ օպերայում, ուր երգել են աշխարհիս ամենայայտնի երգիչները, (բաւական է յիշել որ Պատիլի պէս երգչուհին ամենափայլուն ժամանակում այդ օպերայի զարդն է եղել և երբ երկու տարի առաջ սահագին դուստրով հրաւիրուեց երգելու, երկնչեց այն տեղ գնալ և աւելի լաւ համարեց իր տուած խօսքը մեծ դրամական փաստ կրելով չը պահել, քան այնտեղ զնալով սուր ընդունելութիւն գտնել:—)

Համար ի փութութիւն ՓԱԹՐՐՍՐՆ, Մայիս 19 ... Նմանաբար Երէկ փաթեթովն այցելելու բարեբաղդութիւն ունեցած լինելով կը փախաբիմ գրել ձեզ զոր ինչ տեսայ և տեղեկացայ ի մասին այդ քաղաքի Հայոց: Սոքա թէ և թուով 40 է աւելի չեն, սակայն Հայ անուան պատիւ բերելու և ազգին անուան արժանի գործեր ընելու համար բաւական:

Տեղեւոյ ազգայիններն՝ քիչ բացառութեամբ՝ տեղեկ են տեղական լեզուին և ունին այժմ լաւ վիճակ: Յառաջիկայ Յուլիսի 4րդ, 5րդ և 6րդ օրերն քաղաքին ու շրջակայից տեղացիք այս քաղաքի հաստատութեան 100րդ տարեդարձը պիտի ածեն մեծ շքուղեթեամբ: Այս մեծ հանդիսին պիտի մասնակցին նաև քաղաքին Հայերն: Այս մասին այլ ևս այլ նախապատրաստութիւններ տեսնուած են, հանդիսին կամ լաւ ևս է ըստմեծ թափօրին մէջ, որ տեղի պիտի ունենայ այդ առիթով, պատուարեր զիրք մը ունենալ: Նոյն թափօրին նախապատրաստուելու համար մեր ազգայիններ վարձեալ սրահի մը մէջ շարքով մի քանի գիշերներ հաւաքուելով զինուորական կրթութիւններ կը սորվին յատուկ մարզիչի մը առաջնորդութեամբ: Այս ամիսը ընելու համար 200 տղար ծախքի պէտք տեսնուած լինելով տեղեւոյ Հայերն հանդիսակալութիւն մը բացած ու այդ գումարն ըստորագրած են իրենց մէջ: Այս դրամն, որ մեծաւ մասամբ գումարուած է արդէն, պիտի ծախուի հանդիսակալինաց, շքանշաններու, գրօշակներու, նուագարանաց և այլ պիտոյից համար:

Սա խմբի գլխաւոր առաջնորդը պիտի ըլլայ թափօրին մէջ Տ. Գ. Պարոնեան, որ ձիւն վերայ նշանած պիտի առաջնորդէ բովանդակ խմբին և Պ. Չանգալան պիտի ունենայ հրամանատարի պաշտօն: Այցելութեանս երկուցին ևս ևս ներկայ գտնուեցայ յիշեալ կրթական փորձաքնն. մէկին որն շատ գոհացուցիչ էր արգարեւ:

Կարժէ որ նիւ ետքի և շրջակայից մեր հայրենակիցներն ևս ներկայ գտնուին և մաս առնեն մեծ թափօրին մէջ՝ զայն աւելի ևս փառաւոր ընելու համար: Հայոց այս քաղաքական մեծ վանդիսին մասնակցին կըստիպէ ամերիկացիներն հաւատալ թէ Հայերն ոչ միայն կը սիրեն իրենց ազգն, այլ և կը յարգեն այն ազգերն որք արժանի են յարգանաց: ՍՈՒՐԷՆ

ԶՈՒԱՐՃԱԼԻՔ

ՄԵՐ ՍԻՐԱՀԱՐԸ

(Շաբ. և վերջ)

Դուռը դարձնելով ներս մտայ, և ըսի որ եկած եմ կարեւոր բանի մը համար օրիորդն տեսնել: Օրիորդն՝ որ առանց ձմեռները հաշուելու 15 տարեկան էր, երեսները պոկիկ բուտար և ներկ քրտած էր, ձիւնի պէս ճեւղակ թախմա ախառներ և սեւ մազեր ունէր, վերջապէս գիտուն, բայց պճնասէր, ունայտասէր, և թիչ մը ալ կուտասէր էր, և միշտ 15 տարեկան եմ ըսելով կուզէր ուրիշներուն զօրով կըլլեցնէր, և 20 տարեկանէն վեր երիտասարդի մը հետ չամուսնանալ միտքը դրած էր, երբ իմ խնդիրքս լսեց երեսը թթուեցնելով, բայց քաղաքավորութեան դէմ չգործած ըլլալու համար զիս իրեն սենեակը առաջնորդեց:

Այս աղջկան Հայրը շատ հարուստ է. դեղին սոկիներ շատ ունի. ինք ալ մէկհատիկ է. վաղը Հայրը մեռնի բարձր հարստութեան վրայ պիտի նստիմ, կըսէի ինքնիքնս: Ինչ որ է ներս մտանք չի մտանք ճառս սկսեցի:

Օրիորդը մինչև վերջն մտիկ ընելէ յետոյ շատ կարմրեցաւ, և կերէր սր իմ խօսքերուս համար շատ բարկացեր էր, բայց ինքզինքը զուպեց թիչ մը տանն, և վերջապէս գլուխը երեքնցնելով ըսաւ. —Անկարելի է, պարսն. էս Հօրս տեղ մէկի մը հետ ամուսնանալու միտք չունիմ:

Այս ըսելով սկսեց զէպի դուռը երթալ. բայց ես ճամբան կըտրելով սուլուն ելայ ու սկսեցի աղաչել: Օրիորդին համբերութիւնն հասաւ, ու կրակ կարելով ըսաւ. —Պարոն, թողէք զիս ու հեռացէք: —Ուրեմն չէ՞ք սիրեր զիս, Օրիորդ:

—Ոչ միայն չեմ սիրեր, այլ և կատակ: Չայս լսելով դուրս ելայ, ու տունս գալով քէօռ հալիս վրան ողորացի ու որոշեցի չամուսնանալ երբէք:

Գ. ՊՈՒՂՏԱՆԵԱՆ

ԱՆՆԵԼԻՔ ԾԱՌԱՍՆ

Անցեալ օր Պ. Ա. իւր ծառան երկաթուղեաց կայարանն զրկեց գիտնալու համար թէ Երեքաօղ զընացող վերջի կառախուրն այդ օր ժամը քանիին կը մեկնէր, որպէս զի կարենար որոշեալ ժամանակին կայարան գտնուիլ նոյն կառախմբով մեկնելու համար:

Ծառան երկու ժամ ուշանալէ վերջ երբ վերադարձաւ Պ. Ա. հարցուց. —Ինչո՞ւ այսչափ ուշացար, տղա: —Տէր իմ, կայարանն սպասեցի իւր երկու ժամ: —Ինչո՞ւ համար: —Պայտօնայն ըսաւ թէ կառախուրն ժամը չարտին կը մեկնի, բայց չը հատուով անոր ըսածին, սպասեցի որ աչքերովս տեսնեմ վերջի կառախուրն մեկնելին, ու ճշգրտաւ լուր մը բերեմ ձեզ:

Եւ երբ միւս օր Եղօն եկեղեցի դնաց աղօթելու, երբնա աղօթում էր Աստուծն, որ Աստուծ խղճայ իրենց, վերցնէ նեղութիւնները, խնայէ փոքրերին. երբ նա բաւական աղօթած՝ կարծես ուզում էր հաւատալ, Աստուծ պիտի լսէ իրեն, յանկարծ քահանայի ձայնը զիպաւ ահանջին, որը ասում էր. —Աւագակը ուզում է հեռանալ գիւղիցս, որդիք. (Շաբուանակիլի)

Վ. ՓԱՓԱԶԱՆՅՑ

ՃԳՆԱԻՈՐ ԷՂՕ

(Շաբ. տե'ս թիւ 54)

Եղօն այդպէս էր: Նրա ձեռքից վախենում էր գործը. նրա համար դժուարութիւն չըկար: Իւր ջրապինդ բազուկներով նա եզին՝ կոտողներիցը բռնած՝ ուղղութեան էր բերում և տանում լծին տակ. երբ շունչ էր առնում, կարծես փռնում էր. խրճիթը մտնելիս պէտք է սաստիկ ծուռէր, որ սեւ մազերով ծառուած գլուխը առատասպին շրիփէր:

Գեղեցիկ էլէր. սև, համարեա միացած, խիտ յօնքերի տակ փայլում էին նրա՝ բարութեամբ լեցուած՝ մեծ սեւ աչքերը. կոր, մեծ քիթը չէր ազնուացնում նրա լիքը ու թուի դէմքը, որը աւելի թխնում էր խիտ մորուքից և սրածայր հաստ ընչացքից:

Եղօն օրը մինչև երկուց գործում էր առանց յազնելու, ամբարում էր ձմեռուայ համար և երեկոյեան գնում էր տուն, ուր նա զուարճանում էր երեխայի հետ, կատակում էր իւր սիրուն կնոջ հետ, որին նա անհուն սիրով սիրում էր և որից նոյն կերպով էլ սիրում էր: Ջրաղեցնում էր իւր ծերունի ծնողներին, որոնք կաթնաղին սիրում էին իրենց մի հատիկ թուռն մանչին. . . . և երջանիկ էր նա այդպէս՝ իւր արդար գործի և խաղող ու սիրելի ընտանիքի մէջ:

Սակայն նրանք ցաւ էլ ունէին և այդ ցաւերից ամենամտանելին էին հարկահանները և գիւղի աւազակ բէգը:

Հարկահանը «զափթիչ»ներով գիւղն էր մտնում, ուտում էր, խում, թափում, կոտում, յետոյ հաւաքում էր 'հարկը թէ՛ կըրպայց այդ տարի գիւղացին և ո՛չ մի իսկ տաւար ունեցած կամ ցորեն քաղած լինէր, թէկուզ սաղ տաւարը կըտրուած և արտերը այրուած լինէր: Վերջին ունեցածները աւնում էր. եթէ հաւառակում էին՝ ծեծել էր տալիս, ժողովում՝ քաղաք տանում, բանտի մէջ օրերով փթեցնում, և կամ տանում՝ ձգում էր վաշխառուների ձանկը, ուր խեղճ գիւղացին դրաւ էր դնում հողերը և գոհացնելով հարկահանին՝ արտում տխուր վերադառնում էր գիւղը:

Այստեղ նրան սպասում էր աւագակը, որը գալիս խում էր կովը և կինը. —միտն այդ էր մնացել գիւղացուն. . . . Որչափ ուրախ կըլինէր, եթէ իւր կեանքն էլ խլէին հետը: Ցաւեր էին դրանք, ցաւեր, որից ազատ չէ ո՛չ մի թիւրքահայ գիւղացի, ո՛ր մնաց խեղճ ձգնաւոր Եղօն:

Եւ երբ միւս օր Եղօն եկեղեցի դնաց աղօթելու, երբնա աղօթում էր Աստուծն, որ Աստուծ խղճայ իրենց, վերցնէ նեղութիւնները, խնայէ փոքրերին. երբ նա բաւական աղօթած՝ կարծես ուզում էր հաւատալ, Աստուծ պիտի լսէ իրեն, յանկարծ քահանայի ձայնը զիպաւ ահանջին, որը ասում էր. —Աւագակը ուզում է հեռանալ գիւղիցս, որդիք. (Շաբուանակիլի)

ՄԵՐ ԱՌԻՓ ՄԸ

ՀԱՅ ՈՍՏԱՅՆԱՆԿԱՅ ՀԱՄԱՐ

Ընթերցող և ընկերութիւնն որ 42րդ փողոցի վրայ մի մեծ գործարան կը բանեցնէ մետաքսի, նպատակ ունի Գարոյանա նահանգի մէջ մի այլ մետաքսի գործարան բանալ Հայ ոստայնանկեր գործածելու նպատակաւ, պայմանաւ որ բոլոր աշխատուորքը, բացի գործարաններէն ու վերատեսչէն Հայ լինին: Ընկերութիւնն որչաժ է այս ընել սա միայն պատճառաւ որ իր քով աշխատող Հայերն լաւ աշխատանքներ լինելով վատահումութիւնները ընչէր են գործարանատեսարց: Սոքա յանձն կառնեն ամէն գիւրաւթիւն տալ գործաւորներուն ապրուստի և բնակութեան համար, և կը վատահանեն թէ այս մասին պէտք եղած ծախքերն այնչափ պիտի ըլլան որչափ հարկաւոր է: Ապրեցու համար ի նիւ ետքը: Այս ձեռնարկութեան սկսելէ առաջ ընկերութիւնն կուզէ գիտնալ թէ Գարոյանա երթալու փափաքող անձինք քանի Հայեր կան: Հարկ է ըսել թէ 100 Հայ ոստայնանկերու պէտք կայ անպատճառ:

Արդ այս մասին փափաք ունեցողներն պարտին լուր տալ Ա. ՉԱՏՈՒԹԻՆԻ խմբագրութեան և կամ Տ. Պ. Պոյաճեանի, կարելի եղածին չափ շուտ:

ԵՐԳԵՐ ԿՈՒՉՈՒՆ

Մեր հրատարակած Ազգային երգարանին մէջ նպատակ ունենալով զենել կարգ մը չի հրատարակուած ազգային երգեր ու բանաստեղծութիւններ պատիւ ունինք ներկայիս յայտարարել արդոյ հասարակութեան թէ սիրով պիտի ընդունինք մեզ զրկուած ամէն երգեր ու բանաստեղծութիւններ՝ հրատարակելու համար այս ընդարձակ երգարանին մէջ: Առանց երգ քննելու հրատարակուածներն ապահովուին:

Ա. Չ. Գ.

Անգլիերէն և Գարոյեան դաս առնել փափաքող անձինք կրնան դիւրամաշէլի գնով այցելու դասատու մը գտնել շարքով երեք գիշերի համար: Փափաքողք պարտին դիմել հետն աւագակին: Դասատու, Ա. ՉԱՏՈՒԹԻՆԻ խմբագրութեան միջոցաւ:

ՀԱՅՐԻԿ ՊԱՏԿԵՐԸ

Հ. Հ. Մ. նիւ ետքի Օթեակը չինել տուած է ՀԱՅՐԻԿ փառաւոր պատկերներն ընտիր քարտի վերայ մաքուր սպաքութեամբ: Կը վաճառուի խմբագրութեանս քով հատը 10 Սէնթի:

Վ. Կ. ԲԱՐՍԻԿԵԱՆ

Ուսուցիչ, Մաս.

Կը հրատարակ իւր հայրենակիցներն հանդերձեցնեն կամ գըլխարկ գնելու համար նախ գիմել Bay State clothing Co. ընկերութեան վաճառատունն ի թիւ 46 և 48 Ֆլորենթ ըսթրիթ, ուր ինքն ամէն Շաբաթ երկուցներ ներկայ լինելով մասնաւոր հոգ կը տանի Հայ յաճախորդաց:

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

ԲԱՆԱԼԻ ԱՆՊՈՒԵՐԷՆ ԼԵՉՈՒԻ ՄԱՍՆ Ա. Նիւ ետք — Տպար. ԱՐԱՐԱՏԵԱՆ Գրեց

ԱՐԱՄ ԱՅՎԱՏԵԱՆ

Կը յանձնարարենք ոյս փոքրիկ մատենան Անգլիերէն ուսանալի փափաքողաց, որք լաւ բանալի մը կը գտնեն անոր մէջ Անգլիերէն լեզուի դասերն բանալու համար:

Գնել փափաքողք պարտին գիմել հեղինակին հետեւեալ հասցէի: A. AYVADIAN 72 University Place, N. Y. City

